քահանայից եւ 'ի վարդապետաց անտի Ծայթ կոչեցելոց բնակեալ յԵրուսաղէմ և 'ի սահմանս նորա։ Եւ ոմանք 'ի կղերականաց խորչէին հաղորդիլ ընդ նոսա, եւ հարցին զՊատրիարքն Անտիոքայ, և Նիքոնն հրաման ետ հաղորդիլ ընդ նոսա 'ի հոգեւորս. զի 'ի բազում տեղիս նահանգի նորին բնակէին բազմաթիւ քահանայք և կրօնաւորք 'ի Ծայթ կոչեցելոց. լեզու, դիրք և ընթերցուածք նոցա Հայերէն. բանք նոցա ճշմարիտք իբրեւ գրոց մերոց. նոյնպէս և հաւատք նոցին, և ոմանք 'ի նոցանէ կային մինչեւ 'ի ժամանակս մեր բնակեալ 'ի քաղաքն Կարնոյ, և ձեռնադրութիւնն առնուին 'ի Պատրիարքէն Անտիոքայ, որպէս և ինքն ձեռնադրեալ է զԵպիսկոպոսս և Քահանայս։

Սոքա են բուն յազգէն Հայոց և բաժանեցան 'ի պատճառս խռովութեան ժողովոյն Քաղկեդոնի, և կոչին Հայ հոռոմ, և բնակին այժմ 'ի կողմանս Ակնայ և դաղթեալ ոմանց 'ի Բիւթանիա, և մինչեւ ցարդ վարին հայկական դպրութեամբ յեկեղեցիս և 'ի քաղաքական կենցաղս. բայց տգիտաբար զինքեանս Ցոյն կոչեն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Երկրորդ ժողով Կոստանդինուպօլսի։ Վանք Սաբայ կրօնաւորի։ Թուղթ Գրիգորի Եպիսկոպոսի Արծրունեաց 'ի Հայս։ Վասն ոծնի Ցեռանընդառաջի։

Ի Հայրապետութեան Աթոռոյն Երուսաղէմի Եղիայի յարեաւ խռովութիւն յաշխարհին Պաղեստինացւոց 'ի մէջ միանձանցն մեծի Լաւրայի, այն է վանք սրբոյն Սաբայ, վասն մոլորական գրոց Որոգինեայ, զորս յառաջագոյն հարք ժողովոց մերժեալ էին։ Թէպէտ եւ Եղիա հայրապետ խորհրդով Ս. Սաբայ եհան արտաքսեաց զխռովարարսն 'ի ժողովոյ եղբարց, այլ յանկանել Եղիայի 'ի ձեռն Անաստասայ Կայսեր եւ 'ի մեռանիլ Ս. Սաբայ, համարձակութիւն գտեալ խռովչաց՝ որսացին զբազում միանձունս 'ի կողմն իւրեանց, և սկսան համարձակ քարո-